



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ԾԽԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱԿԱՇՈՒԹԵԱՆ ԵՐՐՈՐԴ  
ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՎՈԹԻՒ ՄԱՏՈՒՑՈՒՎԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

**ԽԱԶԻՆ ԴԱՐՁԵՔ ԵՒ ԱՆԿԵ ՀԱՄԱՏՔ, ԶՈՐՈՒԹԻՒՆ ՈՒ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ  
ԽՆԴՐԵՑԵՔ: ԱՆՈՌ ԱՊԱՒԻՆԵՑԵՔ ԵՒ ԻՐ ԶՈՐՈՒԹԵԱՄԲ  
ՃԵՆՑՈՒՑԵՔ ԱՅՍ ՀԱՄԱՅՆՔԸ**

ՊԱՏԳԱՄԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐՐԱՉԱՆԸ

## Ս. ՊԱՏԱՐԱԳ

Կիրակի, 27 Սեպտեմբեր 2009-ին, արժանաւորապէս նշուեցաւ Նեւատա նահանգի Լաս Վեկաս հաստատուած ծխական համայնքի վերակազմութեան երրորդ տարեդարձը:

Այս արիթով՝ Թեմիս Բարեջան Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Ս. Սրբ. Արք. Մարտիրոսեան Ս. եւ անմահ պատարագ մատոյց Լուտերական Եկեղեցւոյ մեջ, եւ իր պատգամը փոխանցեց շրջակի հաւատացեալ ժողովուրդին: Եկեղեցւոյ մուտքին Յ.Ս.Ը.Ս.ի Լաս Վեկասի «Արցախ» Մասնաճիւղի սկաուտները դիմաւորեցին Առաջնորդ Սրբազան Հայրը: Սրբազանը օրինեց զանոնք եւ անոնց աղօթքներ բաժնեց:

Սրբազան Հօր կ'ընկերանար ու սուրբ խորանին կը սպասարկէի Ջրիստոնեական Դաստիարակութեան Գրասենեակի Վարիչներէն Հոգշ. S. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան: Արարողութեանց մասնակցեցաւ Բարեշնորի Զօհրապ Սրբ. Եարալեան: Ս. Պատարագին ներկայ էին վերապատուելի Սեւ Ակիւլեան, ինչպէս նաեւ Ազգ. Վարչութեան անդամներէն Տեարք Վահե Յովակիմեան եւ Վահրիճ Փիլաւճեան:

Առաջնորդ Սրբազանը իր պատգամին սկիզբը շնորհաւորեց Լաս Վեկասի Եկեղեցական համայնքի վերակազմութեան երրորդ տարեդարձը եւ բարձր զնահատեց ծխական յանձնախումբին, տիկնանց միութեան, դպրոց եւ յարակից միութիւններու Եկեղեցանուեր ճիգերն ու ազգանուեր աշխատանքները, որոնք կը ծառայեն զաղութիս օրէ օր ծաղկման ու վերելքին:

Հայ Եկեղեցւոյ տօնացոյցին համածայն այդ օր Վարագայ Ս. Խաչի տօնն էր: Սրբազան Հայրը նախ այս տօնին պատմականը կատարեց, թէ

ինչպէս 653-660 թուականներուն միջեւ, երբ Յայ ժողովուրդը կ'ապրէր հալածանքի ու տագնապալի օրեր, ասպատակուելով թշնամիներէն, Աստուած զանոնք միհիթարեց՝ Վարագայ լերան վրայ բացայայտելով դարեր շարունակ Յոհիվսիմեանց Կոյսերուն կողմէ պահուած Խաչափայտի մասունքը: Ս. Խաչի այս երեւումը տեւեց տասներկու օր շարունակ, նոր յոյս ու հաւատը ներշնչելով տառապեալ ժողովուրդին, այսպիսով՝ գոտեպնդելով անոնց հաւատըն ու վստահութիւնը Խաչին ու Խաչեալին նկատմամբ: Դարերու վրայ տարածուած աղօթքներու եւ խնդրանքներու բացայայտումն եր Ս. Խաչին ճառագայթիլը, որուն առաջին ականատեսները եղան լերան վրայ ճգնող միայնակեացները, որոնք լուսափայլ Ս. Խաչին երեւումը տեսան որ շարժելով եկաւ ու հանգչեցաւ այն խորանին վրայ՝ որուն ներքեւ պահուած կը գտնուեր սուրբ մասունքը:

Ինչ որ Վարագայ լերան վրայ անցեալին պատահեցաւ, այսօր ալ իր պատգամը ունի մեզի փոխանցելիք, շեշտեց Սրբազնը: Առաջին՝ պէտք չէ արհամարհել աղօթքին զօրութիւնը: Պէտք է աղօթենք մաքուր սրտով ու խղճմտանքով յարատեւօրէն, առանց ձանձրանալու, առանց յուսահատելու, մինչեւ որ ստանանք մեր խնդրանքները: Ճգնաւոր հայրերը աղօթեցին դարեր շարունակ, մինչեւ որ արժանացան Ս. Խաչին տեսութեան: Երկրորդ՝ պէտք է հասկնալ Խաչին խորունկ իմաստը: Խաչը սէր է, Աստուծոյ մեզի հանդեպ ունեցած խորունկ սիրոյն նշանն է: Խաչը հաւատը է, յոյս է, մեղքերէ ազատում է, թողութիւն ու փրկութիւն է: Տակաւին՝ Ս. Խաչը զէնք է չարին դէմ, պահպանութիւն է անոնց՝ որոնք կը հաւատան անոր, միհիթարութիւն է անոնց՝ որոնք կ'ակնածին անկէ, յաւիտենական կեանք պարգեւող է:

Արդ, այս տօնը մեզմէ իւրաքանչիւրին հրաւեր մըն է, որպէսզի մեր աչքերը Խաչին ու Խաչեալին յարենք: Խաչին նայինք մաքուր սրտով ու բա՛ց հոգիով, եւ այս ատեն Ս. Խաչը մեր կեանքերը պիտի թարմացնէ ու մեզ Աստուծոյ՝ առաջնորդէ: Խաչին դարձէք եւ անկէ հաւատը, զօրութիւն ու բժշկութիւն խնդրեցէք: Երբ յուսահատ էք՝ անո՞ր նայեցէք ու պիտի զօրանաք ու միհիթարուիք: Երբ մեղանչած էք՝ անո՞ր նայեցէք ու պիտի սրբուիք: Երբ հիւանդ էք՝ անո՞ր նայեցէք ու պիտի բժշկուիք: Այս շերմեռանդութեամբ Ս. Խաչին նայեցէք ու այդ ճամբէն քալեցէք: Ս. Խաչին ապաւինեցէք եւ անոր զօրութեամբ շնչուցէք այս համայնքը, եզրակացուց Սրբազն Յայրը:

Յաւարտ Ս. Եւ անմահ պատարագին, հաւատացեալներ, դպրաց դասի ընկերակցութեամբ, երգեցին «Կիլիկիա» մաղթերգը, ապա ներկաները խմբային յուշանկար մը առին Առաջնորդ Սրբազնին հետ:

Արարողութեան աւարտին մկրտութեան խորհուրդ կատարուեցաւ, զոր կատարեց Առաջնորդ Սրբազն Յայրը:

## ՃԱԾԿԵՐՈՅԹ

Ճարաթ, 26 Սեպտեմբեր 2009-ին, կազմակերպութեամբ ծխական յանձնախումբին եւ եկեղեցաւը տիկնանց միութեան, տեղի ունեցաւ եկեղեցւոյ եւ Լաս Վեկասի հայ համայնքին վերակազմակերպման երրորդ տարեդարձի ճաշկերոյթը:

Ողջոյնի եւ բարի գալուստի խօսքեր արտասանեցին Տիկ. Շաքէ Աճամբեան եւ խորհուրդի ատենապետ՝ Տիար Կտրուշան Արմենեան։ Գործադրութցաւ գեղարուեստական կարճ յայտագիր. Օրդ. Արտա Մահսերեճեան երգեց «Կիլիկիա»ն, իսկ Օրդ. Դալար Տարագճեան ջութակի վրայ նուագեց «Երեւան դարձած» երգը։

Հայ Դատի Յանձնախումբի Ներկայացուցիչ՝ Տիար Արա Շիրինեան, Ներկայացուց Ամերիկայի Ծերակուտականի թեկնածու՝ հայազգի Տեհի Թարխանեանը, որ բեմ բարձրանալով իր ամբողջական պատրաստակամութիւնը յայտնեց, իր ընտրութենեն Ետք՝ ամբողջապես սատարելու Հայ Դատին ու անոր արդար պահանջըներուն։

Այս առթիւ Սրբազնան Հայրը յատուկ գնահատագիրով մը պատուեց գաղութիս Եկեղեցական թէ ազգային կեանքըն ներս լայն ներդրում ունեցած եւ Հայ Դատի բազմամեայ ծառայողներէն՝ Տիար Հրայր Տետէեանը։ Իր գնահատագրին մէջ Սրբազնը այսպէս կը գրէր. »Տիար Հրայր Տետէեանի գործը կենսաւորուած է մէկէ աւելի զուգահեռ ու զիրար ամբողջացնող գիծերու վրայ։ Երիտասարդութեան տարիներուն, ան ծառայած է ամերիկեան հայրենիքին, զինուորական ծառայութեան ճամբով։ Աւելի ուշ, յատկապես 90ական տարիներէն ի վեր, ան եղած է Լաս Վեկասի ծխական մեր շրջանի «բանալի անձը», որ ծխական յանձնախումբի գործունեութեան ճամբով, ո՞չ միայն մեր Եկեղեցւոյ յարկին տակ համախմբած է շրջանի հայութիւնը, այլ նաեւ ծեռևհասօրէն մասնակցած է գաղութի կեանքին ծաղկումին։ Մեծ է նաեւ իր Ներդրումը՝ Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն մէջ։ Տասնամեակներ շարունակ, ան եղած է Հայ Դատի գրասենեակի աշխատանքն ու պետական շրջանակներու հետ յարաբերութիւնները մարմնաւորողը։ Գործած է հետեւողականօրէն, հայութեան իրաւունքները ծանօթացուցած է քաղաքապետական ու նահանգային պատասխանատուններու եւ Ներկայացուցիչներու, եւ արդարօրէն կուտակած է արդար հունձք ծեռք բերող մշակի վաստակին։ Ան քրտինը չէ խնայած նաեւ Հայ Ամերիկեան Մշակութային Ընկերակցութեան անդաստանին մէջ, ուր ունեցած է կարեւոր Ներդրում։»

Սրբազնան Յօր գնահատագրին կողքին մեծարեալը նոյնպիսի գնահատագիրներու արժանացաւ Նահանգային ու Քաղաքապետային պատասխանատուններու կողմէն, որոնք բոլորն ալ բարձր կը գնահատէին Տիար Տետէեանի ունեցած Ներդրումը ընդհանրապես Ամերիկեան Հայրենիքին ու յատկապես Նեւատայի Հայ գաղութի կեանքերէն ներս։ Մեծարեալը խօսք առնելով, իր շնորհակալութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազնան Յօր, պետական պատասխանատուններուն եւ գաղութի անդամներուն, իրեն ընծայած այս անակնեալ ու գեղեցիկ պատիւին համար։

Առաջնորդ Սրբազնը անգամ մը եւս շնորհաւորեց Նեւատա Նահանգի Լաս Վեկաս հաստատուած Եկեղեցական համայնքի Երրորդ տարեդարձը եւ յոյս յայտնեց որ Լաս Վեկասի համայնքը հաւատքով, միասնական ճիգերով եւ սերտ գործակցութեամբ կ'իրականացնէ սեփական Եկեղեցի ունենալու երազ։

Ուրախ ու խանդավառ մթնոլորտի մէջ վերջ գտաւ ճաշկերոյթը։

## **PRELATE CELEBRATES DIVINE LITURGY IN LAS VEGAS ON THE THIRD ANNIVERSARY OF THE RE-ESTABLISHMENT OF THE PARISH**

On the weekend of September 25<sup>th</sup>, 2009, the third anniversary of the re-establishment of the Las Vegas Parish was ceremoniously observed with a banquet and Divine Liturgy celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

On Sunday, September 27<sup>th</sup>, the Prelate arrived at the church where he has greeted by scouts from the Homenetmen "Artsakh" Chapter. Accompanying the Prelate and assisting at the altar were Very Rev. Fr. Barthev Gulumian and Deacon Zohrab Yaralian. Among those in attendance were Executive Council members Mr. Vahe Hovaguimian and Mr. Vahrij Pilavjian.

Prior to his sermon the Prelate congratulated the parish community on their anniversary, and commended all those who diligently serve for the growth of the parish.

In his sermon on the Feast of the Holy Cross of Varak, the Prelate first gave a brief historical background of the origin of the Feast, stating that the miraculous event occurred sometime between the years 653 and 660, at a time when the Armenian people were experiencing great hardships due to a series of wars. It was in that despair that the Cross appeared and illuminated the Varak Mountain as a symbol of hope and faith from God. And for twelve days the Cross shined above the mountaintop, drawing in faithful from near and far who came to offer prayers at the miraculous revelation. Furthermore, the Cross appeared following the persistent prayers of generations of devout hermits who lived in the mountains and whose primary desire was to be in the presence of the Holy Cross. The Prelate asserted that this Feast still has great implications for us today; "First, do not underestimate the power of prayer, be persistent in your prayers, and pray with a pure heart and with faith. The hermits prayed for generations until they were graced with the presence of the Holy Cross. Second, comprehend the deep significance of the Cross. The Cross is love, a symbol of the depths of God's love for us, His children. It is faith, hope, freedom from sin, redemption and salvation. The Holy Cross is a weapon against enemies, protection for those who believe, comfort to those who fear; it is life-giving." Thus, the Prelate urged the faithful to look to the Cross for faith, hope, strength, and healing, and trust in the power of the Cross as their guide as they work for the splendor of the parish community.

The service concluded with the singing of the Cilician anthem and a group photo.

The annual banquet was held on the evening of Saturday, September 26<sup>th</sup>, organized by the Parish Council and the Ladies Auxiliary. Welcoming remarks were delivered by Mrs. Shake Ajamian and Parish Council Chair Mr. Adroushan Armenian. An artistic program also took place. ANC representative Mr. Ara Shirinian then introduced to the guests candidate for the U.S. Senate Mr. Danny Tarkanian, who expressed his readiness to work closely with the ANC to further the Armenian Cause upon his election.

During the banquet, long-time community activist Mr. Hriyr Dadaian was honored for his service. On this occasion, the Prelate presented Mr. Dadaian with a letter of blessing and commendation. “Mr. Hriyr Dadaian’s service has encompassed a wide range of fields. In his youth, he served his country as a member of the United States Air Force. Upon his relocation to Las Vegas in the early 1990’s, he became a key player in the development and expansion of the Las Vegas Armenian community. His decades-long contribution to the advancement of the Armenian Cause is also noteworthy. He has worked closely with the Armenian National Committee, fostering a working relationship with public officials for awareness of our Cause and recognition of our rights, and has also done great work through the Armenian American Cultural Society. In short, Mr. Dadaian has spared no effort in working towards the progress of the Armenian people, and his life and service should be an inspiration to all and especially to our youth,” read the letter.

In addition to the Prelate’s letter of blessing and commendation, Mr. Dadaian had received commendations from state and local officials for his contributions to the Las Vegas community.

In conclusion the Prelate once again congratulated the parish community, expressing hope that they the dream to have their own church will be realized in the near future.